հնությունն ու կապը վանքի հետ, մի նորություն կլինի մեզ համար։ Այսպիսով Պռոշի վիմափորների զմբեթների զարդագրությունը մեր առաջ դնում է մի խնդիր, որ ամենայն հավանականությամբ անցյալից յեկած ավանդ է, բայց որի ողակները անցյալի հետ կապող, մեզ անհայտ են։

Մյուս զարդագրություններից ամենից բնորոշն ու ժամանակակից գեղարվեստական հոսանքը մատնանշողը վիմափոր գավթի շղթայված առյուծներն են, բերանին ող յեղան գլխով և մագիլների մեջ խոյ բռնած արծվով, որ մենք յենթադրությամբ Պռոշյանների զինանշան համարեցինք։ Այս յենթադրությունը հիմնավոր համարելով հանդերձ, որովհետև քանդակը զինանշական բնույթ ունի, պետք է հայտնենք, սակայն, որ հատուկ չեր այն միայն Պռոշյաններին, այլ որոշ մասերով Հայաստանի ուրիշ տեղերի և սելջուկյան — մահմեդական արվեստի*։ Ընդհանրապես զինանշանների փոխառություններ ու փոփոխակներ հաճախ են նկատվում արվեստի պատմության մեջ. առյուծը մեջքի կողմից կենդանության ծառով տեսնում ենք Սասանյան արվեստի մեջ**. կենդանության ծառը խաչով փոխարինած Անիի պարիսպների վաղող առյուծի հետ. նույնը քիչ տարբերությամբ Ռուբինյանց դրամների վերա, կամ նույն իսկ յեկեղեցական պաշտամունքի հետ կապված իրեղենների զարդագրության մեջ, որպիսին այստեղ ցուցադրած դրակալի առյուծն և խաչով և ծառով (պատկ. 63. 64)[1]։ Փոքր Ասիայի սելջուկների և նոր պարսիկների մեջ տեսնում ենք կենդանության ծառը և խաչը փոխարինած արևով[2]։ Եւ վերջապես նմանություններ կան նրանց մեջ շարժումների և ձևակերպության նկատմամբ, ի հարկե, և որոշ փոփոխություններով և տարբերություններով։ Վերցնենք Անիի պարսպի վաղող, գեղարվեստական և կենդանի արտահայտությամբ առյուծը առանց խաչի (պատկ. 65), և մենք կկարծենք, թե Սելջուկյան արվեստի մի գործ է այն, որ համեմատել կարելի յե Դիարբեքիրի պարսպի



Թղենյաց վանքի գավթի առաստաղը. **Պատկեր 62.**

աշտարակներից մեկի արձանագրության (1089/90 թ.) յերկու կողմից վազող առյուծների հետ*։ Նույնը կարող ենք ասել և մեր ցուցադրած դրակալի առյուծի մասին։ Այսպիսի նմանությունները չպետք է մեզ հիմք ծառայեն անմիջական փոխազդեցության հետևանք համարել ամեն ինչ, որ փոքր ի շատե նմանություն և բերում միմյանց, այլ գեղարվեստական մի ընդհանուր հոսանքի զանազան շրջաններում, որոնց փոխազդեցությունները ճշգրիտությամբ դժվար է որոշել։

Ակադեմիկ Մառի պեղումներով Անիի Միջնաբերդի դրան մոտ գտնված և մի քար, առյուծի քանդակով. աջ թաթը վեր բարձրացրած, պոչի ծայրը արմա-

---

* Amida. Max van Berchem և Josef Strzygowski 1910. Heidelberg Taf. XVII. 2. և յեր. 78։

** Восточное Серебро. 91. 285, 311.

1 Դրակալի արձանագրությունն է. «Ցիշատակ է պը. Գրիգորին և ծն/—մյուս յերեսին —շինեալ։ ի Թվ։ Զ։ Ի։ Ա։» Առաջին երեսի ձախ անկյունը կտրած է, նորոգված է յերկրորդ յերեսի աջ անկյունը, ներքևից. Տարաբաղդաբար չափագրությունը չունենք այժմ ձեռքի տակ. լուսանկարն ուղարկել է մեր խնդրքով Ն. Նախիջևանից Ռուբեն ա. քահ. Բեկզյուլյան։

2 Sarre. Reise in Kleinasien, Berlin. 1896. 39։

* Strzygowski. Amida. 346. պատկ. 294. Տախտ. VII. 1. Տախտ V.